ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2022թ. սեպտեմբերի 7-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 8-րդ Բ դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Գայանե Դավթյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրություն:
2. 2022-2023 ուստարում ուսումնական գործընթացը կազմակերպելու հարցի քննարկում:

1.Լսեցին.- Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրության հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Գայանե Դավթյանը՝ ներկայացնելով ծնողական խորհրդի ընտրության կարգը: Առաջարկվեց նոր ուսումնական տարվա համար ձևավորել 8-րդ Բ դասարանի ծնողական խորհուրդ՝ նախագահ և չորս անդամ կազմով: Առաջարկվեց հինգ անդամների թեկնածություն:Նախագահի թեկնածու առաջադրվեց Սյուզաննա Գինոսյանը, որից հետո կատարվեց քվեարկություն, որի արդյունքում միաձայն նախագահ ընտրվեց Գինոսյանը:

Որոշեցին. - 8-րդ Բ դասարանում ձևավորել ծնողական խորհուրդ հետևյալ կազմով.

1. Սյուզաննա Գինոսյան /նախագահ/
2. Հարությունյան Գայանե /անդամ/
3. Ոսկանյան Անուշ /անդամ/
4. Ասատրյան Հրաձին /անդամ/
5. Ավետիսյան Հռիփսիմե /անդամ/

2.Լսեցին.- 2022-2023 ուստարում ուսումնական գործընթացը կազմակերպելու հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Գայանե Դավթյանը՝ նշելով, որ այս տարի նոր ուսումնական տարին 8-րդ Բ դասարանը սկսել է՝ այցելելով <<Գիտության և տեխնիկայի և տիեզերքի >> թանգարաններ: Աշակերտների արձագանքը բավականին ոգևորիչ է եղել, նրանք տպավորված էին նոր գիտելիքներով: Ծնողները հատուկ շնորհակալություն հայտնեցին

դասղեկին՝ աշակերտներին ոգևորելու և գիտելիքի նկատմամբ սեր սերմանելու համար: Դասղեկ Գայանե Դավթյանը տեղեկացրեց, որ սահմանվում է հնգօրյա աշխատանքային ռեժիմ, դասերը սկսվում են 9:00-ին և ավարտվում են 15: 00- ին : Նա հրահանգեց, որպեսզի ծնողներն ուշադիր լինեն երեխաների ուսման հարցում, գրենական պիտույքների, համազգեստների և հաճախումների նկատմամբ: Տեղեկացրեց նաև, որ 1-ին կիսամյակը բաղկացած է 15 շաբաթից:

Որոշեցին.- Առավել ուշադիր և հետևողական լինել երեխաների ուսման հարցում: Պահել ուսուցիչ-աշակերտ-ծնող կապը, անհրաժեշտության դեպքում մեծացնել երեխաների վերահսկողությունը, որպեսզի կարողանան առավել արդյունավետ կազմակերպել ուսումնական գործընթացը:

Ծնողական խորհրդի նախագահ՝ Սյուզաննա Գինոսյան
Քարտուղար՝ Հարությունյան Գայանե